# Հ Ր Ա Մ Ա Ն   N 260-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ

**«18» ՄԱՐՏԻ 2020 Թ.** **ՔԱՂ. ԵՐԵՎԱՆ**

ԳԱՐԵԳԻՆ ԻԳԻԹԻ ՂԱՐԻԲՅԱՆԻՆ ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԲԱԺՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ (ԾԱԾԿԱԳԻՐ՝ 12-3-23.3-Մ2-1) ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 16-րդ մասով, 16-րդ հոդվածի 4-րդ մասով, 17-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առաջին փոխվարչապետի 2018 թվականի դեկտեմբերի 12-ի N 441-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 7-րդ կետը, ինչպես նաև Պրոբացիայի ծառայության կենտրոնական մարմնի նյութատեխնիկական մատակարարման և շահագործման բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 12-3-23.3-Մ2-1) թափուր պաշտոնն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի հարցազրույցն անցկացնող հանձնաժողովի 2020 թվականի մարտի 18-ի եզրակացությունը և Գ. Ղարիբյանի դիմումը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ   Ե Մ՝

1. Գարեգին Իգիթի Ղարիբյանին 2020 թվականի մարտի 19-ից նշանակել Պրոբացիայի ծառայության կենտրոնական մարմնի նյութատեխնիկական մատակարարման և շահագործման բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 12-3-23.3-Մ2-1) պաշտոնում:
2. Աշխատավարձը սահմանել՝ 212 309 ՀՀ դրամ՝ համաձայն «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքի:
3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

***Ժամանակավոր պաշտոնակատար՝***



**ՆԱՐԵԿ ՂԱԶԱՐՅԱՆ**